



2015 թվականի նոյեմբերի 19-ին « Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի / CCMS / գրասենյակում տեղի ունեցավ հանդիպում Լոռու մարզի աշակերտների տրանսպորտային, աշխարհագրական և սոցիալական դժվարություններ» թեմայով:

Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ Լոռու մարզպետարանի, երեխաների , կանանց և ընտանիքի պաշտպանության բաժնի պետ Նարեկ Սարգսյանը, Լոռու մարզպետարանի՝ կրթության, մշակույթի և սպորտի վարչության, կրթության բաժնի մասնագետ Կարինե Մելիքսեթյանը, ՀՀ Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի դպրոցների տնօրեններ, ուսուցիչներ, Լոռու մարզում գործող ՀԿ-ների ներկայացուցիչներ, համայնքների բնակիչներ և ակտիվ քաղաքացիներ:

« Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն կատարել է ուսումնասիրություն կապված ՀՀ Լոռու մարզի աշակերտների տրանսպորտացիոն դժվարությունների աշխարհագրական և սոցիալական ասպեկտների հետ: Ներկաներին ներկայացվեցին ուսումնասիրության արդյունքները:

Ուսումնասիրությունն ընդգրկել է ՀՀ Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանի 13 հիմնական դպրոց ունեցող համայնքներ, հիմնական դպրոց ունեցող համայնքներին հարակից 6 միջնակարգ դպրոց : Ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ ՀՀ Լոռու մարզի Թումանյանի տարածաշրջանում հիմնական դպրոց ունեցող համայնքի բնակիչ աշակերտները ստիպված են լինում կրթությունը շարունակելու համար հաճախել այլ համայնքներում գտնվող հանրակրթական դպրոցներ և ուսումնական հաստատություններ, հանդիպելով մեծ դժվարությունների: Համայնքների հիմնական մասում չի գործում միջհամայնքային տրանսպորտը և երեխաների հիմնական մասը հաճախում է դպրոց հետիոտն, հաղտահարելով 3-10 կիլոմետր և նույնքան տուն հետ գնալու ժամանակ:

Ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ ՀՀ 7 մարզերում, գործում է «Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծառայությունների մատուցում» ծրագիրը , որի հիմքում ընկած է ՀՀ «Հանրակրթության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 10-րդ մասի 6-րդ կետը:

ՀՀ Լոռու մարզին հատկացվում է տարեկան ծրագրով նախատեսված գումարի 0,5%, կամ տարեկան 278 100 ՀՀ դրամ, ինչը մեղմ ասած շատ չնչին գումար է որոշակիորեն խնդիրներին լուծում տալու համար:

Մարզերի միջև այդպիսի անհամաչափության արդյունքում ՀՀ Լոռու մարզի մի շարք համայնքների աշակերտներ, դպրոց հաճախելու համար ստիպված են ոտքով հաղտահարել կիլոմետրեր կամ ծնողների ուսերին է մնում աշակերտների տեղափոխման հետ կապված

նյութական ծախսերն, հարուցելով սոցիալական , իսկ ձմեռվա ամիսներին նաև առողջական խոչընդոտներ և դժվարություններ : Ուսումնասիրության ժամանակ, մասնակիցների մեծ մասի համար նորություն էր, որ ՀՀ-ում գործում է նմանատիպ ծրագիր: ՀՀ Լոռու մարզպետարանի ներկայացուցիչները կարևորեցին բարձրացված խնդիրների լուծման համար շահագրգիռ բոլոր կողմերի համագործակցությունը, ինչպես նաև խնդրի հանդեպ ՏԻՄ ուշադրության մեծացումը, քանի որ խնդիրը որոշ համայնքներում ըստ մասնակիցների կարող է լուծվել նաև տեղական մակարդակում:

Առաջիկայում «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի ներկայացուցիչները կվերջնականացնեն արդյունքները, համայնքների բնակիչների հետ միասին կմշակեն առաջարկությունների փաթեթ և կներկայացնեն իրավասու մարմիններին: «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն հայտնում է իր պատրաստակամությունը, վերոնշյալ խնդիրների բարձրաձայնման և լուծման նպատակով համագործակցել շահագրգիռ կողմերի, կառույցների հետ տեղական, մարզային և ազգային մակարդակներում:

«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ

19.11.2015

